



ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Չ.բ. 1.
ՏԱՐԵԿԱՆ... 45
Վ.ԵՑԱՄՍԵԱՑ 25
—
ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Է

Ն.բ.
ՏԱՐԵԿԱՆ... 15
Վ.ԵՑԱՄՍԵԱՑ 8
—
ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱՂ. 6

ՓԻԻՆԻԿ

Շ Ա Բ Ա Թ Ա Բ Ե Բ Բ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՉՈՐԵԲՇԱԲԹԻ 5 ՄԱՐՏ 1902

ԹԻԻ 41

Փիիւնիկի ներկայ թիւին հրատարակութեան յապաղումը կը պարտինք այն կարեւոր կարգադրութեան, որով Փիիւնիկը պիտի այսուհետեւ հրատարակուի ամեն ՉՈՐԵԲՇԱԲԹԻ օրերը, Արտասահմանի թղթատարութեան օրերուն հանդիպեցնելու համար թերթին առաքումը:

ՄԵՐ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վերջապէս եկաւ հասաւ սպասուած րոպէն, պատկերու հաւար հանրային փափագը, որ է ԱռժՎ. Թաղ. Խորհուրդին լուծուելը նուիրագործող նոր, օրինաւոր ու տեսական Թաղ. Խորհուրդի մ'ընտրութիւնը: Ու ՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹԻ ԱՅՆ, ՍԱՀՄԱՆԱԿՐԱՊԵՍ, ԺՈՂՈՎՈՒԴԻՆ ԿԱՄԲՈՎՆ ՈՒ ՔՈՒԵՆԵՐՈՎԸ:

Արդեւ սասնեակ մ'օր կայ որ Ս. Պոդոս Պետրոսի պատէն կախուած է Յանկի վրայ սպառուած անուններու ազգայիններուն, որոնք ընտրողի օրինակս հանգամանք

պիտի կրէին. բայց, գիտե՞ք, ի՛նչ ցանկ է այն. ա՛յնքան կասարեայ, որ վաղուց հայրենիք մեկնած այրիի մ'անունն անգամ կը փայլի հոն, իր հանգուցեայ երկան անունն փոփոխը զետեղուած, միևնոյն, չ'եմք գիտեր, ի՛նչպէս ու ի՛նչու հոն չ'են անցած անուններ որոնք իրենց վրայ կը կրեն բոլոր հանգամանքներն ընտրողութեան ու ընտրելութեան, 5 տարիէ աւելի է որ կը զտնուին եգիպտական հողին վրայ, անուրի քէ տնոր, 25 տարիքը յուսուցած, շատերն ալ 30ր անցուցած, գերծ ամեն կարգի դասապարտութեան, յիւսուցողը չ'ապրած, ծանօթ դիւտեր, որոնց ընտրողի կամ ընտրողի իրաւունքը ժխտող ո՛ր է ք օրինակս արգելք գոյութիւն չ'ունի. հետեւաբար, տնուած ըզգայով այդ Յանկին մեկէ աւելի քերութիւնները, ներքի է հաւասար քէ՛ Պատկ. Ընտրող. Ժողովնիս պիտի փոքրայ առաջին առիթով՝ փափագուած հետեւանքը սալ դիւտելներուն ու դիտողութիւններուն — անհասական քէ հաւաստական, մանաւանդ հաւաստական, որովհետեւ բացակայ էր կամ մեռած ազգայինները չ'են կրեար դիւտել ո՛չ ցրաւորապէս ո՛չ անձաւք — կասարեայ Յանկին վրայ բոլոր հարկաւոր սրբագրութիւնները, նոր ու խնամեայ Յանկի վրայ պատրաստել ու ապա՛ միայն ձեռնարկել նոր ընտրութեանց, ինչ որ բանաւոր է ու օրինաւոր էր կը հաշտուի հանրային կաւթին, մանաւանդ հիւսայ որ ՍԱՀՄԱՆԱՎ.

ԴՐՈՒԹԵԱՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՄԷՋ ԱՆ
ԴՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ դարձած է անհրաժեշտ
ու շահած է անենամեծ ժողովրդականու-
թիւնը:

Այս նոր ընտրութիւնները, փութա՛նք
խոստովանիչ, մասաւր կը պարտինք լուս-
միտ գաղափարներուն, կորովի նկարագրին,
հեռաստե հայեացներուն ու հաշտասար ֆա-
ղափականութեանը Վեւել. Նուպար Ռդիլին,
սոսանց որուն միջանոցութեանը, ղեռ շատ
պիտի ճիգ քափուէր պաշտպանելու. սուսին
կորսուած դասը, յամառելով Առժ.Թագ.կորհ.
կարծեցեալ սահմանադրական կազմութեանն
ու ոգիին վրայ. ու սակաւին, ո՛վ գիտէ ի՛նչ
գաղափարութիւններ աչ պիտի ծագէին ֆա-
րսուդարի մը, քաղականութեան ինքնակոչ
փաստաբանի մ'անպատիժ, աջուճախ ար-
շարակի վագֆէն ու յիւսար յարձակումնե-
րէն...:

Մամուլը, կոխոսելով անեն նկատու,
անձնականութեան վեր, բարձրէն դիտելով
Հարցը, անկախօրէն ու յամառօրէն մեղեց
միջեւ զարդ պայքարը, պաշտպանեց հնէ-
րութեան իրաւունքները բռնաբարումներու
դէմ ու կամայականութեանց, որոնց յուժը
բնականօրէն չ'էին կոչուած սանելու Մար-
տիրոս Ազգի մը զաւակները որ Մեծ-Մար-
դասպանին սուրէն մագապուր՝ շայն շունչ
մ'ստած են այս անհիւրանեժ ու ազատ
երկրին ծոցը. զաւակները գրկուած Ազգի մը,
որ Ածրունիի, Բանաւ-Քարիպայի ու Տիգ-
րան երկաթի պէս ծնունդներ գիտէ արտադ-
րել: Ազատական մամուլը չը թերացաւ բնաւ
իր պարտականութեան մեջ. բռնաբարում
օրէնքին ազատագրութեան ու անոր բացար-
ձակ տիրապետութեան համար ճոնչեց ու
մոնչեց, դատապետեց յետադիմները. արգա-
նասանք մը ծնողներու խնկարկու, տիրա-
ցու երանակին, խարազան մը ժողովուրդին
միանշարժութիւնը շահագործող ծանծաղալիս-
ներու կռնակին, դեղակալ մը սգիտ չօրպանի-
ներու հիացումը խոյր յեզուազարներուն,
ու մեկ բառով, խաչակրութիւն մը նախա-
պաշարումներուն դէմ, անա՛ Մամուլին
գործը, զոր մասամբ կատարած է շեշտու
հպարտութիւնը պիտի ներուի մեզի անշուշտ:

Սակայն, ի՛նչ ընէ մամուլը կարգ
մ'ուխտեալ ու համոզուած սգիտներու, ո-
րոնք, այսօր, անուններ դարձած են, աղ-
մուկովը շահաստիպեանց, զորս անպա-
րարի մը վարպետութեանը ի գործ դրին
հակահանրագիրներ պատրաստելու, պսցնելու

ստորագրութիւններ մուրալու կամ կորզե-
լու մեջ:

Ձեզի՛ է որեւէ մեր խօսքը, ձեր ար-
դար ֆրսիմքով ձեր հացը ճարողներ. ձեզի՛
կ'ողողեմք մեր ձայնը, ներկարարներ, կոչ-
կալարներ, կոչկալաճառներ, դերձակներ,
ոսկերիչներ, արհեստարուներ անէն կարգի
ու վաճառականներ. գործի մարդիկ ու մեքի
մարդիկ, ձեզի՛ մակաւանդ, ընտանիքի հայ-
րեր որ կը հետեւիք տեղական կենսականօրէն
շահագրգիռ հարցին, այն է տեղիս գաղափա-
րականութեան բարգաւաճումն ու զարգացումն
հարցին. ձեր զաւակներուն ապագային մտա-
հոգութեանը ստուպող ծնողներ, չե՞ք
փափագիր որ վերջ մը գտնէ այս արժարի
ու ողբալի կացութիւնը, չե՞ք գգար խղճի
խայք մը, ֆակի՛ անտարբեր մնալ՝ այս ապա-
սանքեցնող տխուր իրականութեան հանդէպ:

Ժամը հասած է յուրը գործողութեան,
ինքնանախաճարութեան ապացոյցը տալու ժամն
է այս, Աղետասկզրացիներ: Դուք տեսաք
յարքանակը, զոր յառաջդիմութիւնը տարաւ
յետադիմութեան վրայ, ազատականներուն
յարքանակը ստիպանքներուն վրայ. այս է
ստաջին փուլը մամուլի պայքարին. տեսա-
կան յարքանակը միայն տեսաք դուք, կարգը
հիմաւ եկաւ գործնականին. երկրորդ փուլը
մեծ ենք արդէն, այն օրէն որ Ընտրողական
ժողով մը կազմուած է նոր ընտրութեանց
հսկելու պաշտօնով:

Ճանկը պիտի սրբագրուի անտարակոյս
ու պիտի ունենանք 600 է արեւի ընտրողնե-
րու թիւ մը, որ պիտի ֆուռարկէ: Բայց գի-
տե՞ք, ընտրութիւնները հասարակութեան մը
գիտակցութեան աստիճանաչափը կը հարա-
բառնին. On mérite le gouvernement qu'on a.
(Անեն ժողովուրդ իր արժանիքին համեմատ
կառավարութիւն կուտենայ) կըսէ Մոն-
թեսքիո. ջանակ մը որեւէ ունենալ վար-
չութիւն մը, որ մեզի արժանի ըլլայ, կամ
այսպէս ըսելով, վարչութիւն մը, որուն մեկ
արժանի ըլլակն: Երկայացող առիթը է
տարին մեկ անգամ միայն կը ներկայանայ,
հետեւաբար յրջօրէն, ոչ թերեւորէն պիտի է
որ բաշխեմք մեր ֆուռները:

Սահմանադրութիւնը, բարեքաղաքաւ,
նախաստեղով խարդախութեանց, խօս-
տուներու, ողբալուներու կամ ճնշումներու
պարագաները, մասնաւոր յօդուածով մը կը
տրամադրէ որ ֆուռարկութիւնը զաղնի կա-
տարուի. ամէն ազգային, որ պիտի ֆուռարկէ,
չը պիտի ստորագրէ ֆուռարկողը, հետեւաբար

մասնուելու ո՛ր եւ է վախ կամ վստակ չըկայ: Ուստի ով որ կը ծառայէ պէշի մը, կ՛փէկնի մը, ջոջի մը, աղայի մը ֆով. ով որ կախում ունի մեծաւորէ մը, ազա՛ս է ամեն ձնշումէ, հերիֆ է որ անսայ իր խղճի ձայնին. յանախաղէպ է որ բարոն մը բռնակայ իր ծառային կամ պաշտօնէին վրայ, այս կամ այն անձաւորութիւնը յանձնարարելով իբր ընտելի. հոգ չէ՛, հակահանրագրին պարագայէն բոլորովին սարքեր պարագայի մը հանդէպ պիտի զտնուած ըլլայ կախեալ պաշտօնէան կամ փոքրաւորը, գործէն հանուելու վստակէն զերծ է անի, քանի որ գաղտնի է ֆուկարկութիւնը: Մի՛ խաբուիք ուրեմն խօսումներէ կամ սպանակախօսներէ, դո՛ւք ձեր ֆուկները տուէք ձե՛ր իսկ ընտելիներուն, այնպիսիներուն տուէք, որոնց կը ձանկնափ փորձաւորութիւնն ու ձեռնհասութիւնը, բաւնիմացութիւնն ու անկեղծութիւնը, ուղղամտութիւնն ու մանաւանդ անձնուիրութիւնը:

Այս էջերուն մէջ արդէն նշանակած ենք Թաղ. ընտելիէ մը պահանջուած յատկութիւնները, բայց աւելորդ չէ նաեւ արտագրել Սահմանադրական Հրահանգէն առ այժմ միայն 2 յօդուածներ.

ՅՕԴ. 6 (էջ 4) Ընտրելի են այն ամեն ազգայինը որ 30 տարիքը լրացուցած են, առաջնորդանիստ քաղքին մէջ կամ անկէ կէս աւուր միջոց հեռաւորութիւն ունեցող տեղ մը կը բնակին, որ ժողովին օրերը դիւրութիւն ունին ներկայ գտնուելու, ԿԱՐԻԱԼ ԳՐԵԼ ԳԻՏԵՆ (ՀԱՅԵՐԷՆ) եւ նոյն գաւառին ազգային գործոց հմուտ անձինք են:

ՅՕԴ. 7 Այն անձինքը որոնց յիմար ըլլալը ծանուցուած է և կամ ազգին ու կառավարութեան գործոց մէջ քրէական յանցանք գործած և դատապարտութիւն կրած են, ո՛չ ԸՆՏՐԵԼԻ կրնան ըլլալ եւ ո՛չ ԸՆՏՐՈՂ:

Մեր նոր ընտրութեանց առթիւ այս շաբթուան մէջ իսկ ՏԵՂԱԿԱՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ մը պիտի հրատարակենք, որուն վրայ հիմակուրդէ կը դարձնենք ուշադրութիւնը ՓԻԻՆԻԿ Պատ. ընթերցողներուն ու առհասարակ տեղիս հայ հասարակութեան ընտրող անդամներուն: ՅԱԻԵԼՈՒԱԾին մէջ ՓԻԻՆԻԿ խմբագրութիւնը պիտի ջանայ լուսաւորել կարգ մը դէպքեր, որոնց հրատարակ հանուիլը՝ կապուած է անհրաժեշտէն մեր նոր Ընտրութեանց հետ: Այսօր Աղեփանդիոյ մէջ գոյութիւն ունի ազգային կուռ ու հզօր կազմակերպութիւն մը, որ քայլ առ քայլ ու Արգոսի այլերով կը հետեւի մութի մէջ խաղցուած ծիծաղաւոր դերերուն, որոնք այնքան աւելի ապուռ են ու ողորմելի՛ որքան նուազ լուրջ ու գիտակից յայտնուեցան դերակատարները:

Մեծարան, հաւարան, խանութ, փողոց. ուր որ հանդիպիս, պիտի զտնուած ապահովապէս մեկէ աւելի ազգայիններ, որ կը վիճեն օրուան ընտրութեանց վրայ. արդէն ֆուկարկութիւնը — պատճառական — շրջաբերութեան մէջ են, անուաններ կը յանձնարարուին այնպիսի ընտրելիներու, որոնք այս օրերս միայն պէտք զգացած կը բուռն ֆիշ մը մօտեցաւու — եւ երբ արդիւնաւորութիւնն ապահով է — շփուելու մեր խեղճ կօշիկ ներկարարներուն հետ, որոնց մարդ ըլլալը դեռ երեկ կ'անգիտանային, եւ որոնց հայ ըլլալուն չ'էին հանդուրժեր, ուն հզօր պատճառով որ իրենք — բաղդի շար կատակովը — հայ ծնած էին:

Արդ, որովհետեւ հանրութեան փափագն է որ վերջ զտնուած ասեմէ մ'ի վեր տիրող պարտութիւնն ու պառակտումները, վերահասատուի խախտուած փոխադարձ վստակութիւնը հասարակութեան ու ազգ. իշխանութեան միջեւ, ջանա՛նք ուրեմն զալ նոր ընտրութեանց՝ նպատակաշարժար ուղղութիւն մը, ազգովին խնդակցութեան արժանի արդիւնք մը:


Ո՞վ են սակայն մեր ընտրելիները. փութա՛նք ուրեմն նշել, բարձրաձայն, յանուանէ հոշակել զանոնք. գիտակցօրէն ու առանց կանխակալութեան որոշենք մեր ընտրելիները, միակները, որ համապատասխանեն մեր յոյսերուն ու համարումին: Լաւ խորհի՛նք, էրնենք՛նք, հարցախուզե՛նք, համոզուի՛նք ու ապա՛ մեր ֆուկները տան անոնց, որոնք գործադիրներն ըլլան Սահմանադրութեան, նարսար դեկավարողները մեր ազգային հաստատութեանց ու պատճառողները հանրութեան ցուիրական շահերուն: — Ընտրե՛նք դիրքի

մարդիկն ու կիբի մարդիկը, ազնի կիբի մարդիկ, որոնք գոնե կը զատուին շատ մը միահեծան մեծերէ, հայ արիւնը կեղով իրենց երակներուն մէջ, հասարակ նետուելով ամեն ազգոցու ձեռնարկներու մէջ. մարդիկ, որոնց կուրծքին սակ սիւր մը կայ բաբախող ազգին օգտին համար ու փառքին համար. որոնք հոգի մ'ունին քրքուն ամեն հայեցի հաստատութեանց հանդէպ. որոնց բա՛ց է բերանը փակին ու բա՛ց է ամեն ժամ դո՛ւռը բնակարանին. որոնք չ'են փառում ամրացած, իրենց անմասոյց ապարաններուն խորը. որոնց դոնապանները չ'են վունսեր խնդրարկուն. որոնք նախանձախնդիր են եկեղեցին ու ազգը բարձր պահելու համար. որոնք, վերջապէս խնորձ՝ ալ հայ են, դաստիարակութեա՛մբ ալ: Ընտրե՛նք այնպիսիներ, զորս օր մը կարենանք մասով ցոյց տալ պարծենալով. «Մեք ԸՆՏՐԱ՛ՄՆ Է»:

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ

(Կարասկէս Պիլեգիֆձի)



(Շար. ԼԵ. քիւեն)

Երջրզին ու Երոպային դեմ. Երկաթ Պասրիարֆին հետ. Լրեսը. Հսկայ ծրագիրը. Փախուսք. Հայրենիքի Առաքեալը. Մայր ու Որդի. Հերոսին Հոգեբանութիւնը. Յունական Զերուն մէջ:

Ընդհանուր սարսափին մէջ — այնինչ Պալասը դեռ գազանաբար կը հալածէր Մայրախաղափին ջարդերէն նողարած Հայերը — Տիգրան Երկաթ, սիրապետելով աղէտք, նորէն սկսաւ գործի ու իր ազգը մղելով դէպ ի մահառում ու ընդվզում, վստահել փորձեց մարդասպան Սուլթանին գահն ու Երոպական խաղաղութիւնը: Ինչպէս որ Ապս-Իլ-Համիդ պահ մը սոսկաց Դրօսակեաններուն դատադրութեան հանդէպ, նոյնպէս դահլիճները սարսեցան երիսասարդ հայ պետին գրչի

հարուածներուն ուժգնութենէն, ու Հայասանը կարծեցին տեսնել զէն ի ձեռին մեռնիլ վնասած, ուզելով իր Մեծ Տառապանքին վրէժը լուծել գերագոյն Յուսահատութեան քափով մը:

Յեղափոխական խումբերն առհասարակ կը պատուէին Երկաթը, որ Գում-Գարուի Պասրիարֆարանը կ'երթար յաճախ ու գաղտնի կը տեսակցէր Երկաթէ Պասրիարֆին հետ: Այսպէս մեր ազգային բանագոյն իշխանութիւնն ալ կը նուիրագործէր անոր փառափառական դերն ու մահառումի նիգերը:

Անկարելի է չը կարծել թէ՛ դէպքերէն ետք Կ. Պոլիս գումարում Դեսպանախորհուրդին մէջ, տէրութեանց ներկայացուցիչներուն Հայերուս ինքնապատուութեան որոշումներուն մէջ յայտնի եղաւ անոր արդիւնքը: Սակայն Տիգրան լաւ գիտէր թէ՛ արիւնը կ'ուզէր արիւն եւ թէ՛ այնուհետեւ բարբարոսներուն հետ ամեն հաշտութիւն՝ հրէշային բան մըն էր: Ընդվզումի փոթորիկը կ'որոտար անոր ներսիցին ամեն անգամ որ ներկայ կ'ըլլար հայրենասէրի մը Գարս-Քեօյի կամուրջին զլուխը կախուելուն: Նուիրական Մեծ Կոխը կը տեսնար տեղատու սպասումով մը, Մայր-Հայրենիքին Փրկութեան Կոխը: Ու այս Կոխը չէ՛ր դառնար անհրաժեշտ ու չէ՛ր ցցուէր Թուրքերուն եղեռնագործ խժոժաններուն հանդէպ: Անհամբեր հասնումով կը ցանկար տեսնել Զեքունը վերընդվզումի մէջ. Զեքունը զայրագնոտ նորէն փայտայելով Սուլթանին բանակները, վրէժը լուծելու համար հայ արիւնին որ կը հոսէր դեռ Օսմ. Կայսրութեան բովանդակ սարածութեանը վրայ: Սակայն Կիլիկիոյ փառաբի լեռնականները — որ Բարձր Հայաստանի Զարդերուն առաջին լուրին ապստամբելով էտեմ Բաւայի 80000 զօրքէ բաղկացեալ կայս. զունդերը յաղթահարած էին ու ցրում — հանդարտած էին իրենց ի նպաստ Տէրութեանց ներկայ

ցուցիչներուն ազդու միջամտութեանը վրայ որուն մէջ Ֆրանսական դեսպանը Տ. Բ. Գամպոն, հզօրագոյն պաշտպանն եղաւ Ձեթունցիներուն, որոնք ծայրագոյն քսուառութեան մասնուած, հակառակ նմանը չը լսուած իրենց հերոսութեան, ալ պարտէին նախասագրակա՛նորէն ընկնիլ, չ'ունենալով ո՛չ մթերք, ո՛չ պաշար եւ, ափսո՛ս, նոյն իսկ Հայերէս լիւրած թողուած իրենց սե՛ւ բաղդին... ձեռողական միջոցներուն սպառնալիքը դողացուց Ապս-Իլ-Համիդը: Յանկարծ, էհէ՛ւմ բաւան ետ քա՛նց իր բանակն ու ահագին հրետանիները, որոնք պիտի գործածէր բնաջինջ ընելու համար Ձեթունի բնակչութիւնը:

Սակայն Տիգրան Երկաթ համոզուած էր թէ Կիլիկիոյ հրաբուխը պէտք էր որ մարէր եւ թէ՛ այս հրաբուխին բռնկիլը սոսկ կրնար ահաբեկել Թուրքերն ու յաղթութիւնը սալ Հայերու: Ուստի որոշեց ձեռնարկել, անմիջապէս, Եւրոպայի մէջ պայտարի մը որ ի վերջոյ յանգէր Փոքր Հայաստանին ապրստամբութեանը: Ա՛լ կարելի չ'էր երկարել Կ. Պոլսոյ մէջ իր բնակութիւնը, զի խիստ մօտէն կը հսկուէր: ՆՇԱՆ Սէֆէրեան, Դրան գրաբնութեան դիւանին պետք, ի նմ կը կատարէր լրտեսութիւնը մեր մեծ դաւադրին դէմ:

Թողալ պէտք էր Թուրքիան, ու երթալ քարոզել հայկական ապստամբութիւնը քաղաքապետութեան բոլոր կեդրոններուն մէջ: Փախուստէն առաջ պատրաստեց իր քաղաքական ծրագիրը, որուն հոս կը դնենք մեծ գիծերը:

Ա. — Աշխատիլ Աթէնքի մէջ վերահաստատելու համար վաղեմի կապերը որով զօդուած էին Յոյներն ու Հայերը — հաւասարապէս հարստահարուած թրքական բարբարոսութենէն ու հաւասարապէս ենթարկուած համալուծեան ահռելի վտանգին — որպէս զի երկու քոյր ազգերուն միջև այս համերաշխութենէն կարենայ վե-

րածնիլ նախկին մեծութիւնն ու նախնի պայծառութիւնը, որով Յունաստանն ու Հայաստանն եղան Արեւելքի Արփին:

Բ. — Վերարթնցնել Եւրոպայի մէջ հանրային կարծիքն ի նպաստ Հայերուն ու Կրէտացիներուն, մասնաւորապէս Փրանսայի մէջ ոտք հանելով աշխատաւոր դասակարգները, ընկերվարական ու ազատական պետերու միջոցաւ, որոնք պիտի յուզէին Խորհրդարանն ու շուարու մի մէջ գնէին կառավարութիւնը:

Գ. — Ձարնել Սուլթանին անբանային քաղաքականութիւնը, բարիդեան հզօր բերանի մ'առաջնորդութեամբ. (իրեն այս պայքարին համար ընտրեց Ռիվիւ սը Ռիվիւն որուն մեծանունն տնօրէնը Տ. Ժան Ֆինօ յայտնուեցաւ թունդ հայասէր մը):

Դ. — Յոյց տալ Հայ Յեղ. Կուսակցութեանց՝ իրենց ուժը դէպի բանաւոր լուծում մ'ուղղելու միջոցը:

Ե. — Ճամբորդութիւն մ'ընել Հնդկաստան բանախօսութիւններով ոգեւորելու համար մեծահարուստ դասակարգը, որոնց միլիոնները պիտի բաւէին պատրաստելու Հայերուն խմբովին ընդվզումը:

Զ. Կիլիկիոյ մէջ Գործողութիւն մը, զոր անձամբ պիտի վարէր, միջազգային հոյակապ խաչակրութեան մ'աջակցութեամբ ու պաշտպանութեամբը Պետական Մարդոց զոր ինք դաշնակից ըրած պիտի ըլլար Հայ դատին:

Այս ընդարձակ ազգային ծրագրին ուժն ու գեղեցկութիւնը մեզի սրտագին խոկալ կուսան անմահ Քամսա Քաթիպայի հետեւեալ տողերուն վրայ.

«Ասուած վրկայ որ մե՛նք կը յաղթէ ինք, թէ մեկ անձնուրաց մարդ ունենայ ինք: Հապճսապ պատրաստութիւններն ըրաւ երթալու Յունաստան, ուր պիտի կատարուէր իր առաջելութեան առաջին մասը: Փախուստը տեղի ունեցաւ 1896 ի ձմեռը. փախուստ մը, որ քա՛ս վսան-

գալից էր լրտեսներուն պատճառաւ, որոնցմէ շրջապատուած էր միտ: Նախ իր ձեռագիրները դրկեց Ֆրանսա, այրելէ յետոյ մէկ մաար որոնց մէջ կը գտնուէին դժբաղդաբար, *էռնէսդ Ռընաւէ* նամակներ: Անգլիական դեսպանասան քարտուղարին — որ իրովսանն պատշապանութիւն խօսուացած էր — ընկերացած՝ նաւամասոյց իջաւ նետուելու համար *Մեսսուրի Մարիոլիմ* ընկերութեան *Սիւն* շոգեմար գոր մէկէ աւելի ոսիկան վէտեր կը լրտեսէին. բայց յանկարծ ասոնց ու փախչիլ փորձող շատ մը հայ բեռնակիրներու միջեւ կոխի մը ծագեցաւ: Այս միջադէպը թոյլ տուաւ մեր Փախսականին շուտով նետուելու կամրջակին վրայ իր հաւասարիմ բարեկամը միտ ետին: Իսկ Տիկին Պիլէգիկնի նաւամասոյց գացած էր ու անձուկով ախանախես կ'ըլլար իր ամենասիրեցեալ զակին փախուսին իրադարձութեանց: Տիգրան Երկաթ անհունապէս հրճուեցաւ երբ ինկզիմն ազատ զգաց Ֆրանսական նաւին վրայ ու իր ցնծութենէն կը խնդար ու կը խնդար: Հրածեցի ողջոյները տալու միջոցին իր ազնուափայլ ու սրտաւոր որ արդէն կը տառապէր իր միւս երկու որդիներուն յանկարծօրէն Եգիպտոս մեկնումէն — Տիգրանի վերջին խօսքերն եղան. «ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ ՄԱՅՐԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՍ ԴՈՒՆ: Միջեւ այն ժամէն *Կարա* կը յորջորջուէր իր Մօրէն ու իրեններէն:

Այդ ժամէն լուսապայծառ դէմք ունէր առաւելի մը, որ իր առաւելութիւնն ի գործ դնելու համար համբայ կ'իյնայ. ու կը շոգեողար այն աստիճան որ իր հէ՛ք Մայրը — որուն մտքին մէջ դեռ թարմ ու վառ է այդ օրուան յիշատակը — շուտաւ երեսէն եւ սուտ գիտ հաւատաց որ այս մեկնումին մէջ բան մը կը կատարուէր արտասովոր, ծանրակեօն եւ վսեմ բնոյթով իրողութիւն մը:

Այո՛, այս մեկնումը նշանաւոր դէպք մըն էր որ պիտի փառաւորէ մեր ժամանակակից պատմութիւնը: Ծաղրելով բարբարոսներուն բռնութիւնը, ծաղրելով եւրոպական դիւանագիտութեան սնրագործ հաշիւները եւ ուզելով փարատել խուճապի սոսկումը որ բովանդակ ազգ մը կ'ուժատէր, Տիգրան Երկաթ կոթնած իր սկզբունքներուն, իր տղանդին ու հանճարին միակ ուժին, կերբար վեհագոյն ցեղերու քով կազմակերպել Հայաստանին ազատագրութիւնը: Այս մեծ պատշոնին յանձնուելով կը չափէր ամբողջ տարածութիւնն իր պատասխանատուութեան՝ մարդկութեան հանդէպ ու ազգին, բայց անոր նուիրեց ինկզիմն արիաբար, հասկնալով որ այդ վայրկեանէն իսկ բաղդը զինք ընտրած ու իր ձեռներուն մէջ դրած էր նախաազգիրը Մայր-հայրենիքին, որուն փրկութիւնը կապուած էր իր կորովին ու իր անձնութեան հետ: Ո՛հ, ի՞նչ արժանի էր այն ընտրութեան ու ինչ գերազանցօրէն ասակ էր յղանալու ամենայանդուզն ձեռնարկներ որոնք կրնային խմորով ըղեղին մէջը Տրդասներու, Արտաշէսներու, Միհրդատներու եւ Տիգրաններու: Իր պայծառ հակասք, խարսիւտագեղ գրչութիւնը, բոցացայտ աչքերուն ցոլքը, զինք յասկանեող վայելչութիւնը գեղեցկութիւնն ու վեհութիւնը, իր անձէն բխող բարութիւնը, վստահութիւնն ու մեծութիւնը, այս ամենուն հանդէպ կը զգայիր անհուն հիացում մ'իրեն համար եւ նարասահմանեալ էակի մ'առջեւ գտնուելու զգացումը կը կրէր: Այն նաւուն վրայ, իր սրէն ցայտող երջանկութեան մէջ, որ անոր գեղեցիկ դիմագծերը կը լուսերփնէր, անի կը նմանէր նաեւ դէպի յաղթանակներ համբորդող երիտասարդ արեւայի մը: Տիգրան Երկաթի յաղթական մեկնումը դէպի պայքարին ասպարէզը, մեր մտքին կը յիշեցնէ ուրիշ բուական մը:

մեր այնքան փառաւոր պատմութեան ու մեզի կը ներկայէ այնքան պանծալի ու այնքան պաշտելի դէմք մը. Մանկունեան Վարդանիքը, որ եռուզեռ իրն դամադուրեանէ մը կը սարսուռ երբ յափրեցանուած կեցած էր դէմ առ դէմ իր վեհապանծ բանակին, Աւարայրի դաշտը, Տղմուսի եզերքը համախմբուած, այն օրը երբ որ պարս էր ինք առաջնորդել զայն դէպի պատմական հակասամարտները, յաղթանակները: Իսկ Տիգրան, նոր Վարդան մը, կը մեկնէր ստեղծելու համար նոր բանակ մը, միլիոններ կազմող զրկուածներուն դասը պաշտպանելու. եւ անոնց ազատութիւնը ձեռք բերելու ուխտով:


Երբ որ Սիւնք կը բաժնուէր վերջին ջարդերով արհմաներկ փարփներէն, ուսկից երթասարդ հայրենասիրին մայրը, արսասուտար աչքերով, դեռ կը փորձէր անոր հասցընելու վերջին մնասքարովի համբոյր մը, ու երբ նաը սաղապանեմ կը սահէր կ'անցնէր Սարաշին հրուանդանին մօտ փեշելով, Հայեր, յիշեցէ՛ք որ Տիգրան Երկաթ, Ս. Սօճիայի գմբէթին վրայէն, իր արծուի բարկացայտ ու բոցավառ նայուածքը շեշելով Երլսրգ Քեօսկի ոմիր բուրող բլուրին վրայ, երդում ըրաւ յաղթական դառնալ Բիզանդիոն, եթէ ոչ մեռնիլ...: Յիշեցէ՛ք ա՛խ, յիշեցէ՛ք որ անի կռիւր դադրեցուց այն բազմաթիւ միայն երբ անգործէն հրնձուեցաւ մահուան մանգաղէն, հերոսի ու մարտիրոսի կարմասեւ կեանքէ մ'եսքը. այն պահուն իսկ որ իւր փառքովը կը լեցնէր Աթէնքը, Բարիզը, Երոպան ու Ամերիկան... ու երբ Ազգը, սարսամօրէն հանչելով զանի իբր մի երկնառափ ազատարար, կ'սկսէր զանի սիրելու յարգել...:

Իսկ դուք, մեր ապագայի ծաղիկները, ո՛վ պատանիներ, որ եռանդով կը հետեւիք այս ազգային պատմութեան, յիշեցէ՛ք միշտ որ Տիգրան Երկաթ հա-

ւասք ունէր ձեր հայրենասիրութեան ապագային վրայ եւ մեզի խոստովանած էր թէ՛ ձեր սերունդի նեցուկովը միայն պիտի կրնար գործադրել իր վրնուական ծրագիրները՝ վերականգնելու համար Հայաստանին անկախութիւնը. Օր մը նետուելով դուք այն փառքի մամբան, զոր ինք մեզի գծեց իր մահով, աւելի եւ անո՛վ միայն պիտի պատուած ըլլաք իր յիշատակը: Անի սիրելով կը սիրէր ձեզ. դուք ալ զանի սիրեցէ՛ք պաշտուած հոգիի մը պէս. Քրիստոսին պէս. թող Երկաթի կեանքն ըլլայ ձեր սիրելագոյն մասեանը, ձեր Աւետարանը. իսկ մահը՝ մեր յիշողութեան մէջ սուրբ սուգին անմարելի կրակը, սրբազան հուրը հայրենիքի սոխրակոյտներուն շակ քազուցուած...:

Սակայն Սիւնք կտրեց անցաւ Մարմարան, յետոյ Տարսանելի նեղուցէն դուրս նետուեցաւ Եգէականը, որուն ոսկի ու ծիրանի ծուփերը կը թովէին Տիգրանի բանաստեղծական հոգին: Արեւայելագոսին ալ տեսքը, իր հիանալի կողիներովն ու կողեակներովը, կը շլացնէր զանի ու կը կազդուէր: Հիմայ Ֆրանսական գեղեցիկ նաը սահելով Սալամինայի ծովախորշին վրայ, կը տեսնուէր Ելլագայի մագական ծովափունկէն ուր պիտի հնչէին առաջին պերնախօս շեշերը մեր հելլենասէր մեծ հայրենասիրին, դնելու համար դաշնակցութեան մը հիմերը Յունաստանին միջեւ ու Հայաստանին:

(ՎԵՐՋ Ա. ԳՐԻՆ)



— ՆՈՐ ԳԱՐԻ ճաշարանին մէջ Իփիփեանի վանառասան դիմացը, ամսոյս 16ին կիրակի օրը պիտի փառուի Այրի Հայաստանին մեծափառիս պատկերին վիճակահանութիւնը:

Հրաւիրեալ են բոլոր անոնք որ այդ վիճակահանութեան տոմսակներէն գնած են:

ՍՏԱՅԱՆՔ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ:
ԱՐԱՐԱՏԸ Ս. ԳՐՈՑ ՄԷՋ. քարգ-
մանեց Հայր Բառնաբաա Պիլէզիֆնեան
Վիէննա Միսիթ. սյ. 1901. գին 1 Էր.

ՓԱՒՍՏՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ վերա-
բերեալ Ակասողութիւններ. գրեց Գր.
Տէր Պողոսեան Վիէննա Միսիթ. սյ.
1901. գին 1 Էր. 50:

ՍԵՊՍԳԻՐ ԱՐՉՍՆԱԳՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ, Ասորեստանեայ եւ պարսիկ. Վիէն.
Միսիթ. սյ. 1901 գին 4Էր. 50:

ԻՐԱՆԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ Հայ ժողո-
վրդի մէջ. Բ. ԽԱԼԱԹԵԱՆՑ. Բարիզ.
սյ. Բանասերի, 1901 գին 50 կոպիւֆ:

ԳԵՂՈՒՆԻԻ 2թիւր, ողբացեալ Հ.
Ղեւոնդ Ալիբանի զանազան կենդանա-
գրերովը, ու գրասենեկին ու իրեղէնե-
րուն ու պոյսներուն նկարներովը
զարդարուած գեղարուեստական թեր-
թը, նուիրուած գրեթէ ամբողջովին՝ Հ.
Ալիբանի կենսագրութեանը:

Թո՛ղ ներուի մեզ ըսել թէ՛ կեն-
սագրութիւնը շատ սափակ զտանք, ու
ո՛չ համապատասխան մեր սպասածին
բովանդակ Հայութեան պատեցեալը
Հ. Ալիբան, իբր բանաստեղծ ու իբր
բանասէր հայրենագիր, յիշեալ կենսա-
գրութեան մէջ կը ներկայանայ խեղ-
ճուկ աբեղայ մը, Սրբոց Մատուցներ
հաւաքելով հրնուող խաղաղիկ ու աւ-
խարհասեաց առանձնակեաց մը, նրգ-
նաւոր մը:


Մենք կուզէինք կարգալ այդ
կեանքին աւելի շահագրգիռ ու միջնէ
հիմայ անծանօթ մնացած գիծերը, փո-
խանակ յօրանջելու՝ անոր վանական
բուրող տաղկացուցիչ միօրինակու-
թեան առջեւ:

Ո՞վ պիտի պատմէ մեզի բուն Ալի-
բանը, ՅՈՒՇԻԿՔ ՀԱՅՐԵՆԱՑԻՆ ու ՆՈՒ-
ԱԳՔ եւ աննման երգիչը, Նահապետը.
ԱՅՐԱՐԱՏԻ ու ՍԻՍՈՒԱՆԻ անխոնջ խու-
զարկուն ու հաւաքիչը:

Վեհ Ալիբանը, որ կը խօսի օրօ-
րոցներուն հետ ու գրեթեմաններուն երի-

սասարդ Ալիբանն ու ալեւոր Ալիբանը,
մէկ խօսքով, ո՛չ Հայր Ալիբանը, այլ
Հայ Ալիբանը:

ՄԱՆՈՒՑՈՒՄ



ՏԻԱՐ ՏՕԳԴ. Մ. ԺԱՄԿՈՉ կը յայ-
տարարէ արգոյ հասարակութեան թէ իր
բնակարանը փոխադրած է քաղաքիս
Մէնչիյէ Մեծ հրապարակին վրայ
Խառն դասարանին դիմաց, ԲՐԻՄԻՆԵՐՈՒ
ապարանքը, ու կ'ընդունի հիւանդ-
ները ըս առաջնոյն ամէն օր կէս օրէն
եսքը ժամը 2-5:

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ. — Նախորդ
ամսուան 23ին կիրակի օրը Թօզար-
եանց բնակարանին մէջ, Բիւէյ-էյ-Չե-
հայի. տեղի ունեցան ամուսնութեան
հանդէսն ու Ս. Պատկի արարողու-
թիւնը ՏԻԱՐ ԳԷՈՐԳ ԹՕԳԱԹԵԱՆԻ ընդ
Օր. ՍԻՐԱՆՈՒՇԱՅ ԷՔՍԷՐՃՅԱՆԻ ի
ներկայութեան պատկառելի բազմու-
թեան մը, բարեկամներու եւ ազգական-
ներու, որոնք փութացած էին ոգեւորել
յիշեալ համախաբութիւնը, խնդակցու-
թեան տարափներ տեղալով երջանիկ
Չոյզին վրայ, որոնք երկուքն ալ պալ-
սական պարկետ ընտանիքներու ան-
դամներ են:

— Նոյնպէս ամսոյս 2ին կիրակի օ-
րը, Փափագեանի բնակարանը, Շարէ
էյ- Ազհարի Կամի Սուչքան, տեղի ու-
նեցաւ ամուսնութեան Ս. Պատկը
ՏԻԱՐ ԼԵՒՈՆ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ ընդ Օր.
ՎԵՐԺԻՆ ՓԱՓԱՉԵԱՆԻ, ի ներկայու-
թեան երկսեռ բազմութեան մը բարե-
կամներու եւ ազգականներու: Սոյն եր-
կու ամուսնութեանց առթիւ կը յայտ-
նենք մեր խնդակցութիւնները:

